

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ Կ.ՄԱՐԳԱՐՅԱՆՆ ԱՅՑԵԼԵԼ Է
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑ

06.02.2014թ.

Դպրոցականների առարկայական օլիմպիադաների տարածքային փուլերի բարեհաջող մեկնարկից հետո օլիմպիական աշխատանքներին տեղում ծանոթանալու նպատակով ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ Կ. Մարգարյանը և ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Մ. Գարեգինյանն այցելել են Հրազդանի Աս. Մռավյանի անվան N 4 հիմնական դպրոց, որտեղ ընթանում էր պատմություն առարկայի տարածքային փուլը:

Ծանոթանալով աշխատանքների ընթացքին՝ մարզպետարանի ներկայացուցիչները ևս մեկ անգամ հետաքրքրվել են օլիմպիադաների տարածքային փուլերի կազմակերպչական աշխատանքներով, ինչպես նաև տվել են անհրաժեշտ ցուցումներ և հանձնարարականներ: